Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №4 (33) 2017 Гуманитарные науки

ՀՏԴ 37.09 : 004

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈԽԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

[1] Ս.Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, [1] Ն.Գ. ՀՈԲՈՍՅԱՆ, [2] Ն.Ա. ՇԱԼՋՅԱՆ

[1]Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
0010, Երևան, Տիգրան Մեծի 17,
«CIS ՀԱՅԱՍՏԱՆ» ("CIS ARMENIA") *միջազգային կրթահամալիր*
0015, Երևան,Մաշտոցի պող., 2/3 շենք
e-mail: svetachem@gmail.com

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Այս պահանջներին բավարարում է փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդների կիրառումը:

Բանալի բառեր. *փոխգործուն մեթոդներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ, կրթություն, ճանաչողական գործունեություն*

Ներկայացված է խմբագրություն 17.04.2017

Արդի ժամանակաշրջանում Բոլոնիայի գործընթացի համատեքստում ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին բավարարող մասնագետ պատրաստելու գործընթացում անընդհատ շեշտադրվում է աշակերտա- և ուսանողակենտրոն կրթության դերը: Այս գործընթացում կարևոր մաս է կազմում ուսումնական և սովորողի ուսումնառության գործընթացը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Այս պահանջներին բավարարում է ինտերակտիվ մեթոդների կիրառումը:

Ինտերակտիվ դասը փոխգործակցություն է ոչ միայն դասավանդողի և սովորողի, այլև հենց իրենց՝ սովորողների միջև, ուսումնական նյութի և սովորողների միջև:

Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունը դասավանդողի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը, և խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում սովորողները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ: Դասավանդողը ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Դասի դաստիարակչական բաղկացուցիչը պակաս կարևոր չէ, քան ուսումնականը, և այդ երկու բաղկացուցիչները փոխկապված են: Կլինի՞ արդյոք, ուսումը գրավիչ սովորողի համար, կստիպի՞ մտածել, քննադատորեն վերաիմաստավորել: Այս ամենը և շատ այլ բան կախված է նրանից, թե դասի ժամանակ ինչ պայմաններ՝ ուսուցման մոդելներ են ստեղծվել [1]:

Ուսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը՝ պասիվ (էքստրաակտիվ ռեժիմ), ակտիվ (ինտրաակտիվ ռեժիմ), ինտրերակտիվ (ինտերակտիվ ռեժիմ): Պասիվ մոդելի առանձնահատկությունը ուսուցանող միջավայրի ակտիվությունն է: Դա նշանակում է, որ սովորողները յուրացնում են նյութը դասավանդողի խոսքից կամ գրքից, չեն շփվում միմյանց հետ և չեն կատարում ոչ մի ստեղծագործական առաջադրանք: Այսպիսի մոդելի օրինակներ են դասերի ավանդական ձևերը:

Ակտիվ մոդելը խթանում է սովորողների իմացական գործունեությունը և ինքնուրույնությունը: Այս մոդելն իբրև նախապայման ունի ստեղծագործական առաջադրանքների առկայությունը և պարտադիր շփումը աշակերտ-ուսուցիչ համակարգում: Այս մոդելի թերությունն այն է, որ սովորողները հանդես են գալիս որպես ուսուցման սուբյեկտ միայն իրենց համար և կրթական գործընթացում փոխգործակցում են լոկ ուսուցանողի հետ: Այսպիսով, այս մոդելին բնորոշ է միակողմանի ուղղվածությունը, այսինքն՝ միայն ինքնուրույն գործունեության, ինքնուսուցման, ինքնադաստիարակության, ինքնազարգացման տեխնոլոգիաներ:

Ինտերակտիվ մոդելն ի առջև նպատակ է դնում կազմակերպել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության: Այդ իսկ պատճառով դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտվ մոդելի միայն տարրեր՝ ինտերակտիվ տեխնոլոգիաներ, այսինքն՝ կոնկրետ ձևեր և մեթոդներ, որոնք թույլ են տալիս դարձնել դասն անսովոր և ավելի հագեցած ու հետաքրքիր: Չնայած կարելի է անցկացնել ամբողջապես ինտերակտիվ դասեր [2]:

Մեր կողմից դիտարկվել են ինտերակտիվ տեխնոլոգիաների կազմակերպման մի շարք առանձնահատկություններ, նրանց կոնցեպտուալ դիրքորոշումը և նպատակային կողմնորոշումները: Այդ առումով առանձնացնում են հետևյալ չափանիշները.

Դասակարգման բնութագիչները

- Իմաստասիրական հիմքը՝ հումանիստական:
- Մեթոդաբանական մոտեցումը՝ հաղորդակցական:
- Զարգացման առաջատար գործոնները՝ սոցիոծին:
- Ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման տեսակը՝ ուղեկցում:
- Ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման տիպը՝ փոխուսուցում:
- Գերակշռող մեթոդները՝ տրամախոսական:
- Կազմակերպչական ձևերը՝ ցանկացած:

Նպատակային կողմնորոշումները

- Սովորողների անհատական մտային գործընթացների ակտիվացում:
- Սովորողի մեջ ներքին երկխոսության հարուցում:

- Փոխանակման առարկա տեղեկատվության ըմբռնման ապահովում:
- Մանկավարժական փոխգործակցության անհատականացում:
- Սովորողի դուրսբերում ուսուցման սուբյեկտի դիրքերը:
- Սովորողների միջև տեղեկությունների փոխանակման ժամանակ երկկողմանի կապի կայունությանը հասնելը:

Կոնցեպտուալ դիրքորոշումներ

- Տեղեկատվությունը պետք է յուրացվի ակտիվ ռեժիմով, հիմնախնդիրային իրավիճակների, ինտերակտիվ ցիկլերի օգտագործմամբ:
- Ինտերակտիվ շփումը նպաստում է մտավոր զարգացմանը:
- Հետադարձ կապի առկայությամբ տեղեկատվություն ուղարկողը և ստացողը փոխվում են հաղորդակցական դերերով: Սկզբնական ստացողը դառնում է ուղարկող և անցնում է տեղեկատվության փոխանակման գործընթացի բոլոր փուլերը սկզբնական ուղարկողին իր արձագանքը հաղորդելու համար:
- Հետադարձ կապը կարող է նպաստել տեղեկատվության (ուսումնական, դաստիարակչական, կառավարչական) փոխանակման արդյունավետության զգալի բարձրացմանը:
- Տեղեկությունների երկկողմանի փոխանակումը, չնայած ընթանում է ավելի դանդաղ, բայց ավելի ճշգրիտ է և բարձրացնում է վստահությունը նրա մեկնաբանման ճշտության հարցում:
- Հետադարձ կապը մեծացնում է տեղեկությունների արդյունավետ փոխանակման հնարավորությունները՝ թույլ տալով կողմերին վերացնել խոչընդոտները:
- Գիտելիքների ստուգումը պետք է կարևորի ստացած գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունը:

Ինտերակտիվ տեխնոլոգիաները հիմնված են ուսումնական շրջապատի հետ սովորողների ուղղակի փոխազդեցության վրա: Ուսումնական շրջապատը հանդես է գալիս որպես իրականություն, որում սովորողն իր համար գտնում է յուրացվող փորձի ոլորտ: Սովորողի փորձը ուսումնական իմացման գլխավոր ակտիվացնողն է: Ավանդական ուսուցման ժամանակ դասավանդողը իրականացնում է ուսումնական տեղեկությունն իր միջով անցկացնողի, զտողի դեր, ինտերակտիվի ժամանակ՝ աշխատանքում օգնականի դեր, ով ակտիվացնում է տեղեկությունների փոխուղղված հոսքերը:

Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունը ուսուցչի, դասախոսի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում սովորողները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարևոր չէ ակտիվ դասավանդողի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը:

Ինտերակտիվ տեխնոլոգիաներում ուսուցիչը, դասախոսը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նա կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Ստեղծվում է կրթական շփման միջավայր, որը բնութագրվում է բաց գործելաոճով, մասնակիցների համագործակցությամբ, փաստարկներ ներկայացնելու հավասարությամբ, համատեղ կուտակված գիտելիքներով, փոխադարձ գնահատման
և վերահսկման հնարավորությունով [3]:

Ներկայացնենք ուսումնական գործընթացի և մանկավարժական պրակտիկայի ընթացքում մեր կողմից կիրառված մի քանի ինտերակտիվ տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնց միջոցով կարելի է ուսուցման ինտերակտիվ մոդելը ներդնել դասի շրջանակներում՝

- աշխատանք փոքր խմբերում՝ զույգերով,

- դասախոսություններ հիմնախնդրային շարադրանքով
- էվրիստիկական զրույց
- դաս-սեմինարներ (բանավեճերի, մտքերի փոխանակության ձևաչափով)
- կոնֆերանսներ
- գործարար խաղեր
- մուլտիմեդիայի միջոցների օգտագործում
- լիարժեք համագործակցության տեխնոլոգիա
- մոդելավորման տեխնոլոգիա կամ նախագծերի մեթոդ:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական նպատակը պահանջում է վերանայել ուսուցման ողջ բովանդակությունը, այսինքն՝ ճանաչել յուրաքանչյուր սովորողի ստեղծագործ բնույթը: Նրա ներքին ակտիվությունը հանգեցնում է համապատասխան գիտելիքների որոշակի ծավալի յուրացումը կրթական գործընթացի գլխավոր նպատակ ճանաչելուց հրաժարման: Գլխավոր նպատակը սովորողի անձի ամբողջական զարգացումն է: Իսկ անհատի զարգացման միջոցը, որը բացահայտում է նրա ներունակ ներքին ընդունակությունները, ինքնուրույն իմացական և մտավոր գործունեությունն է: Հետևաբար, ուսուցչի խնդիրն է դասի ժամանակ ապահովել այնպիսի գործունեություն, որին նպաստում են ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաները: Գիտելիքների յուրացումը նրա գործունեության արդյունքն է [4]:

Ուսուցման միայն այդպիսի մոդելը, որը հենվում է իմացական գործունեության նպատակների ու դրդապատճառների, ուսուցման մեխանիզմների մասին արդի գիտելիքների ամբողջության վրա, պիտանի կլինի գլխավոր նպատակի՝ անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, իրականացման համար: Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս բացահայտել սովորողների բազմաթիվ հմտություններ և կարողություններ, քանի որ նրանք փորձում են առաջադրված խնդիրներին ինքնուրույն տալ լուծումներ, դերային և խմբային խաղերի միջոցով ստեղծվում են սիմուլյացիոն իրավիճակներ, որոնք մոտ են առօրյայում հանդիպող խնդիրներին:

Այսպիսով, դասավանդողների առջև բացվում է գործունեության լայն դաշտ՝ ստեղծագործել, փորձարարել և որոնել ուսուցման լավագույն և արդյունավետ տարբերակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Подласый И.П. Педагогика. Новый курс: учебник для студ.пед.вузов. — М.: ВЛАДОС, 1999. — Кр. 1: Общие основы. Процесс обучения. — 576 с.: ил.
2. Селевко Г.К. Педагогические технологии на основе активизации, интенсификации и эффективного управления УВП. М.: НИИ школьных технологий, 2005.
3. Двуличанская Н. Н. Интерактивные методы обучения как средство формирования ключевых компетенций // Наука и образование: электронное научно-техническое издание, 2011 http://technomag.edu.ru/doc/172651 \.
4. Бабаханян А.В., Овакимян С. А. Современные концепции химического образования в педагогическом вузе. Непрерывное профя образование в XXI веке, Самара 2008. Межд. научно-метод. конф., сб. статей, с. 220-222.

РЕЗЮМЕ

РОЛЬ ИНТЕРАКТИВНЫХ МЕТОДОВ ОБУЧЕНИЯ В ОБЛАСТИ ОБРАЗОВАНИИ

С. А. ОВАКИМЯН, Н.Г. ОБОСЯН, Н. А. ШАЛДЖЯН

Темпы развития информационных технологий, современные методы обучения, необходимость непрерывного самообразования и развития студентов требуют использования технологий, повышающих эффективность и качество образования, обеспечивающих самопознательную мотивацию, способствующих междисциплинарным связям, интеграции информационных технологий и предметных учебных программ. Интерактивные методы обучения соответствуют этим требованиям.

SUMMARY

THE ROLE OF INTERACTIVE TEACHING METHODS IN EDUCATION

S. A. HOVAKIMYAN, N.G. HOBOSYAN, N.A. SHALJYAN

The pace of the development of information technology, modern methods of teaching, the necessity of continuous self-education and the development require the use of technologies that enhance the efficiency and quality of education, provide self-cognitive motivation, promote interdisciplinary connections, integrate information technology and subject curricula. The use of interactive methods corresponds to these requirements.